

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мпакъ»,
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպայի շարունակում է գինը.—ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գլխաւոր մասնաժողովի նիստը.
Մի հետազոտութեան առիթով. Նամակ Բառու-
ժի (Դոնի վրայ) Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Զօն Բակին:

ԵՐԹՈՒՆ ԶԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ԶԻՆՎԵԼ

Անգլիական կառավարութիւնը որոշել է
Ճովային պատերազմական նոր պատրաս-
տութիւնների համար ծախսել իւրաքան-
չիւր տարի 8 1/2 միլիոն ֆունտ ստերլինգ,
որ հաւասար է Ֆրանսիայի և Ռուսաստա-
նի միացած արտակարգ տարեկան այն
ծախսերին, որոնք նշանակված են Ճովային
սպառազնութեան համար: Առաջիկայ
1900—1901 թուականի համար Անգլիան
հաշուել է իբրեւ զօրքի անհրաժեշտ թիւ
430,000 հոգի, մինչդեռ անցեալ 1899
թուին նա պահում էր 184,853 հոգի:
Գերմանիան պատրաստվում է ընդունել
Ճովային զինուորական մի ընդարձակ
ծրագիր, որի իրագործումը կը պահանջէ
պետութիւնից շարունակ 16 տարի ահա-
գին ծախսեր: Միւս պետութիւնները նոյն-
պէս զբաղված են պատերազմական պատ-
րաստութեան ծախսերով: Ի միջի այլոց
մեծ պատրաստութիւններով է զբաղված
Թուրքիան, որի զեկավարը և աջակից այդ
գործում հանդիսանում է ներկայումս Գեր-
մանիան իր ինտրուկտորներով և գործա-
րաններով:

Չինուորական ոգին, միլիտարիզմը, որի
զարգացման դէմ գործում էին խաղաղու-
թեան քարոզիչները և Հաագայի կոնֆե-
րենցիան, ոչ միայն չեն թուլանում, այլ
նոր և ընդարձակ ծաւալներ են ստանում:
Անգլիայում և նոյն իսկ Ամերիկայում շա-
տապել է իմպերիալիստների, կամ կայս-
րութեան գաղափարի պաշտպանների թի-
ւը: Գերմանիան որոշում է նոր եւ նոր
զաղթամարտեր Զինաստանում, Փոքր Ասիա-
յում, Աֆրիկայում և զանազան կղզիներ-
ում: Արեւելքը դարձել է միջազգային մըր-
ցութեան մի ասպարէզ և իւրաքանչիւր

պետութիւն աշխատում է ձեռք գցել նրա
մի մասը իր ազդեցութեան համար:
Այդ բոլորը ստիպում է պահել զօրք և
ունենալ բաւականաւոր պատերազմական
ոյժ և հեղինակութիւն թէ նոր նուա-
ձումներ անելու և թէ նուաձածը
պահպանելու համար: Ֆրանսա-պրուսական
պատերազմը ստիպեց, որ Գերմանիան մըր-
ցական ունենայ բազմաքանակ զինուորներ
պատրաստ պատերազմական գործողու-
թիւնների համար, իսկ Գերմանիայի գին-
ված լինելը դրդում էր միւս պետութիւն-
ներին ևս զինվել: Անգլիայի ներկայ պա-
տերազմը կը ստիպի Անգլիային նոյն իսկ
այն դէպքում, եթէ նա կատարեալ յաղ-
թութիւն տանէ Աֆրիկայում, պահել
մի քանի տարի շարունակ բազմաթիւ
զօրք նուաձած տեղերում: Ուշադրութեան
պէտք է առնել և այն հանգամանքը, որ
Անգլիան իրան վերադարձնում է համարում
այն առաջխաղացութիւնից, որ թող տուին
իրանց եւրոպական միւս պետութիւնները
նրա տաքսիսի օրերում և ահա բացվում
է պատերազմական պայքարի և սպառնա-
լիքների մի ամբողջ շրջան:

Որքան և տխուր է, որ քսաներորդ դա-
րի շէմքում տեղի ունի պատերազմական
պատրաստութիւնների մի տեղային և
լարված գործողութիւն, բայց դա փաստ
է, որի հետեւանքները կարող են շատ
սարսափելի և կորստաբեր լինել, եթէ
փոսնգի ուրուականը չը գտար պետու-
թիւններին փոխադարձ զիջումներով և
խեղաղի բանակցութիւններով ընդհարում-
ների առաջն առնել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼԽԱՒՈՐ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Զեռեզում ենք Ա. Գալանթարի գեկուցման
երկրորդ մասը:
Երկրորդ քաղաքի մասով գեղերում ջարդված
եւ ստակած կենդանիների թիւը մինչեւ այժմ
որոշ կերպով յայտնի չէ: Մինչեւ այժմ հաշ-
ւում էին 2570 գլուխ. պրիստով Տելեշովի ժո-
ղոված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ
պէտք է համարել միայն 2427 գլուխ. յատուկ

«Մի իրէպարտ, գեղարուեստագէտ, մի մեծ
գրող, բանաստեղծ», ասում են ոմանք. «գե-
ղեցիկութեան առաջնայ, մարդաբէ, փիլիսոփայ,
էսթետիկ կրօնի հիմնադիր», ասում են ուրիշ-
ները: Սրանցից որն է ճիշդ. իրօք այն բոլոր
տիտղոսներն էլ պատշաճ են այս մեծ մար-
դուն, իսկ մեզ գալով՝ մենք կը կամենայինք,
որ նրա առաջին տիտղոսը լինէր մարդկութեան
բարեկամ մի արտակարգ անկեղծ մարդ, որով-
հետեւ իր գործունէութեան ծանր ասպարի-
զում նրա տոկոսնութիւնը, մտքերի բացառիկ
ոյժը, նրա հնազանդ բարոյական ազդեցութիւ-
նը, նրան հետեւողներին մեծ բազմութիւնը մեծ
մասամբ նրա անկեղծութեամբ, նրա սրտի
լայնութեամբ, մեծութեամբ կարող է բա-
ցատրվել: Կարճ ժամանակ չէ գործել նա, մօտ
վաթսու տարի անընդհատ, այդքան ժամա-
նակում որքան նոր հասարակական հոսանքներ,
որքան փիլիսոփայական, բարոյական նոր սի-
ստիմներ են յայտնվել, որոնք իրանց փոփոխու-
նայով կարող էին չըլել նրա մտքերի զեկը,
կարող էին այլ մշտնի, այլ ուղղութիւն տալ
նրա բարոյական-հասարակական գաղափարնե-
րին, եւ սակայն Բոսկինը մնացել է միշտ ան-
զորվել իր՝ idéal fixe-ի վրա, որպէս հօր ա-
լիքների մէջ ցցված մենաւոր ժայռ: Ի՞նչ կասի
այս մասին մեր նիւթապաշտ երիտասարդու-
թիւնը:

Զօն Բոսկինը ծնվել է 1819 թւին: *) Դեռ
շատ փոքր հասակից մանուկ Բոսկինը առան-
*) Այս լուրտածը կազմելիս աչքի առաջ ունեցանք
Ֆրանսիացի Բոբերտ դը-Լա-Սիլլերանի «Ruskin et la
religion de la beauté» աշխատութիւնը, որից և զա-
ղում ենք մի քանի կենսագրական տեղեկութիւններ:

յանձնաժողովը, որ վիճակագրում էր վնասված-
ների՝ դեռ չէ ներկայացրել իր գեկուցումը,
բայց, որքան յայտնի է, համարում է մօտ 4000:
Մեր խորհրդածութիւնների համար մենք վերց-
նում ենք 2427 թիւը: Տելեշովի աղիւսակնե-
րից չէ կարելի ճիշդ կերպով որոշել կենդանի-
ների տեսակները: Մօտաւորապէս մենք ընդու-
նում ենք.

400	գլուխ լծի եզ կամ գոմէշ,
500	» ոչ-լծկան խոշոր ապրանք,
1527	» մանր ապրանք,

2427 գլուխ:

Եթէ ցանկանանք վերադարձնելու ազգա-
բնակչութեան նրա ունեցած կորուստը, եւ
դենք ու տանք նրան փչացած կենդանիների
փոխարէնը, պէտք է ծախսենք մօտ 31,344
րուբլի հետեւեալ հիման վրա: Տնային կեն-
դանիները Ախալքալաքի գաւառում արժեն.

Մի զոյգ եղը . . .	60—120 ռ. եւ աւելի,
Մի եղը . . .	30—60 »
Կիւն կովը . . .	25—30 »
Կիւն ոչխարը (մաքին) . . .	6—7 »
Զը կիթոգները . . .	3—4 »

Եթէ հաշուենք, որ եղը պէտք է գնվի մի-
ջին թուով 40 ռուբլով, մնացած խոշոր ապ-
րանքը 20, իսկ բոլոր մանր ապրանքը միայն
3 1/2 ռուբլով, կը ստանանք մեր վերեւ նշա-
նակած գումարը՝ 31,344 ռուբլի:

Լծկան կենդանիների կարելի է գտնել թէ
երկրաշարժի շրջանում եւ թէ նրա մօտակայ-
քում: Ախալքալաքի գաւառի դուխօբորների
կենդանիները, որ աւելի խոշոր են, կազմում
են տեղական եւ հարաւային Ռուսաստանի
կենդանիների տեսակների մի խաւուրդ. նրանց
հզնւրը հաստկով են եւ ուժեղ, բայց պահան-
ջում են շատ կերակուր, զիմացկուն չեն եւ
ունեն թոյլ կոշակներ. դուխօբորների ապրան-
քը եւ նրա կաշին աւելի թանգ են գնահատ-
վում:

Այժմ անցնենք տներ շինելու խնդրին:
Տներ շինելու ժամանակ պէտք է աչքի առաջ
ունենալ առանձին ծխերի պահանջները, որով-
հետեւ մէկին հարկաւոր է մեծ բնակարան
բազմաթիւ բաժանմունքներով, միւսին աւելի
համեստ շինութիւն: Եւ հաշիւ եւմ առել միջին
գիւղացուն Գիւղական տունը Ախալքալաքի
գաւառում պարունակում է իր մէջ հինգ բա-
ժանմունք՝ 1 սենեակ մարդկանց համար, 1

գոմ, 1 ոչխարանոց, 1 մարագ եւ մի շուաք:
Ամեն մի բաժանմունքը կամ աչքի շինելը նըս-
տում է մօտ 60—70 ռուբլի, իսկ ամբողջ տու-
նը 300—350 ռուբլի: Աչքի առաջ ունենալով,
որ գիւղացին ինքը պէտք է իր ձեռքով աշ-
խատի, որ շինութեան նիւթի մի մասը հին
տների փլուածքներից վերցնվի, նշանակում
ենք մի տան վրա նոր ծախս 200 ռուբլի,
որ 664 աւելված տան վրա կանի 132,800
րուբլի, իսկ եթէ հաշուենք, որ միայն 500 տուն
պէտք է նպաստ ստանան 120,000 ռուբլի:

Տների շինութեան համար անհրաժեշտ նիւ-
թը կայ չընկալքում: Գերմաններ եւ կոնքեր
ձեռք են բերում Բակուրիանի անտառից, որ-
տեղ շատ կան վայր ընկած եւ չորացած ծա-
ռեր: Սրանցից իւրաքանչիւրը արժէ 1—2 ռուբ-
լի, որ գիւղ բերելուց յետոյ արժէ 4—5 ռուբ-
լի: Փայտեղէնը կարելի է բերել անտառից յու-
նիսին, յուլիսին եւ օգոստոսին: Կիր, որ հար-
կաւոր կը գալ ամուր հիւք եւ պատեր շինե-
լու համար, կայ նոյնպէս չընկալքում, օրի-
նակ Ալաստանի մօտ: Անշուշտ այն տները, ո-
րոնք պէտք է կառուցվեն իրանց նախկին տե-
ղերում, աւելի էժան կը նստեն, քան նոր, ա-
ւելի հեռու տեղում շինվածները:

Տների տեղը եւ շինութեան տիպը պէտք է
շուտով որոշել, որովհետեւ հէնց որ ազգաբնա-
կութիւնը կը տեսնէ, թէ հողը այլ եւս չէ եւս
թարկվում երկրաշարժի եւ օրերն էլ կը տա-
քանան, նա կը սկսի նորոգել եւ կարկառել
իր տները, իսկ մի քանի գիւղացիներ նոյն
իսկ այժմ սկսել են պատրաստվել կարկառա-
նեւ անելու: Անկասկած, անհրաժեշտ կը լինի
հողը, որ աւելված գիւղերում լինեն բուսա-
կան թուղ վրայների գիւղացիներին պատասա-
րելու համար, մինչեւ որ նրանց տների շինու-
թիւնը կը վերջանայ:

Ահա այն մի քանի խորհրդածութիւնները,
որ եւ անհրաժեշտ համարեցի գեկուցանել
մասնաժողովին՝ դիւրացնելու հերթական ներ-
կայ կարեւոր հարցերի զննութիւնը: Եթէ գու-
մարենք այն ծախսերը, որ հարկաւոր են այդ
երեք կարիքների համար, կը ստանանք հե-
տեւեալը.

Սերմացու գնելու համար . . .	30,000—36,000 ռ.
Կենդանիներ . . .	31,344 »
Տներ շինելու . . .	120,000—132,800 »
	181,344—200,144 ռ.

Լուծ: Այստեղ փոքրիկ Զօն իրան աւելի մօ-
տիկ զգաց ընտելեանը: Տան շուտամուտից նա
տեսնում էր մի կողմում փուլած ձոխ մարդա-
գետին տեղ-տեղ ցանկած ծառերով և գեղջ-
կական տներով: Եւ միւս կողմից հեռու, հեռու
վայրգօրն ու Հարրովը: Նաեւ տան շուրջը
տարածվում էր մի սիրուն պարտէզ թիթի եւ
կեռասի ծառերով: Այս պարտէզում, գրում է
նա, պայծառ երկնքի տակ եւ ուսուցմանը
րում էի բոյսերը: Եւ ոչ մի ցանկութիւն չու-
նէի բոյսերը մշակել, ինչպէս, թուրքներն ու
ծառերն էլ իմ հագած առարկաները չէին, եւ ոչ
իսկ երկինքն ու ծովը: Եւ հիացմունքով դի-
տում էի, ամեն մի ծաղիկ մաս-մաս էի անում,
մինչեւ որ կարողանայի հասկանալ բոլորը, ինչ
որ իմ մանկական աչքը կարող էր ճանաչել:

Առեւտրական մի քանի անալոգիաներից
յետոյ նրա անտես ու չընկալած հայրը վերջ
ի վերջոյ կարողացաւ ոտքի կանգնել եւ նոյն
իսկ հինգ միլիոնի կարողութիւն ձեռք ձգել:
Այսպիսով նիւթական հոգսերից եւ դառնու-
թիւններից ազատված՝ Զէման ու իր կինն ամ-
բողջապէս նուիրվեցին մի հասակի գաւառի
գաստիարակութեանը: Տիկին Բոսկինը մի հա-
մոզված աւետարանական էր, ասեղութեամբ
լցված դէպի պապը, անընկճելի, տալուն մի
կին, որ իր ամուսնուց եւ դասակից չը բաժան-
վելու համար պատրաստ էր աշխարհի ծայրը
գնալ: Զարմանալի չէ, որ իր որդու դպրոցա-
կան եւ համալսարանական կեանքի բոլոր չըր-
ջանում երբէք նրան մենակ չը ձգեց, երբէք
չը թողեց նրան առանց իր մայրական խնամքի:
Հէնց սկզբից նա դաստիարակում էր իր որ-
դուն հին եւ նոր կառավարանի ոգով: Մտորակի

Բայց այդ, պէտք է շարունակել վնասակար ազդեցությունները կրակելով, բժշկական օգնություն հասցնել, պէտք է կազմակերպել բոլոր ձեռնարկությունների վրա կանոնադրականություններ: Իսկ այդ բոլորը կը պահանջեն ծախսեր:

Մասնավորապես լսելով Ա. Քալանթարի գեկուցումը, որոշեց նրանց քննությունները զբաղվել առաջիկայ նիստերում:

ՄԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

II

Անդրկովկասի շատ մասերում 1894 թվականի անբերրությունը ստիպեց Կովկասյան Գիւղատնտեսական ընկերությունը լուրջ քննություններ անցկացնել նրա պատճառները: Այդ նպատակով ընկերությունը խորհրդի յանձնարարությունով պ. Ս. Զաւարեանը այցելել է Նոր-Բայազետի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Կարսի կողմերում 76 գիւղ, ապա համեմատական մեթոդով և մեծ հետաքննությամբ ուսումնասիրել է տեղի ու տեղը հաւաքած շատ հարուստ նիւթերը: Թողնելով աւելի հետաքննություններ (գլխավորապես մեր մէջ քիչ են այգիները) դիմել 434 երես ունեցող հետաքննարկական ընդհանուր մենք միայն կը փորձենք ընդհանուր տեսություն մէջ ծանօթացնել ընթերցողին Ռուսաց Հայաստանի հետազոտված այդ մասի գիւղատնտեսական դրությունները:

Գիւղատնտեսական արդիւնաբերությունն աւանդաբար արարելով իր գոտաւորի աւարդիւնաբերություններից կայանում է նրանում, որ առաջինը մեծ կախում ունի արտաքին կամ բնական պայմաններից, որոնց մասնակցությունը երկրորդում ինքուստարկային մէջ շատ անհնար է: Տեղի աշխատողական գիւղերը, հողի յատկությունը, կլիման, եղանակների փոփոխությունները և այլն անմիջապէս ազդում են գիւղատնտեսական գործունեության վրա, մինչդեռ գործարաններում կենտրոնացած աշխատանքի նկատմամբ այդ բոլորը չունի անմիջական նշանակություն: Ռուսի հասկանալի է թէ ինչու մեր երկրի գիւղատնտեսական դրությունը ուսումնասիրելիս պէտք է առաջնադաս կարգ ուշադրություն դարձնել բնական պայմանների վրա:

Ռուսաց Հայաստանի վերին յիշատակված մասը ներկայացնում է մի բարձր անտառազուրկ սարահարթ: Այդ սարահարթի վերնահողը ունի հրաբխային ծագում և կազմված է լավայի և տափի քարերից ու փշրած քարերից, որոնց տակից միայն տեղ-տեղ երևում են ստորին ջրանիստ շերտերը, ինչպէս, օրինակ, կրային հողերը:

Այդ հրաբխային քարերը փշրվելով ու կազմավորվելով տալիս են բոյսերին առատ մեծուղ, բայց միւս կողմից այդ քարերի կոշտերը գիւղացուց խրում են արտերը մաքրելու համար շատ աշխատանք:

Ռուսաց Հայաստանի այդ բարձր սարահարթը կտրված է բազմաթիւ կիրճերով ու ձու-

րերով, որոնց լանջերի թեքումները կախաղին նշանակություն ունի վերահողի կազմությունից: Այդ թեքումները շատ անտառազուրկ են կախված հողի մէջ խորը և մանր մասնիկների քանակությունից: Եւրի խոտերով այդ հանգամանքից է կախված վերահողի խորձախառն, աւազախառն և կաւային լինելը: Եւ որովհետեւ համարեա ամեն մի գիւղ ունի զանազան զառիվայրեր, տարբեր թեքումներով լանջեր, ուստի շատ անգամ մի գիւղի վերահողը աւելի շատ բարդություններ է ներկայացնում, քան Ռուսաստանի ամբողջ նահանգները: Որոշ շարժանքի հետեւելով մեր երկրում գոտաւորում է, եթէ ի նկատի ունենանք որ և Վրաստանը, հողի և օդի խոնավությունը, լոյսի և առնաստիճանը բոլոր բնական պայմանների տարբերությունները խորտ ու բորտ Հայաստանում աւելի բարդ են և ամեն քայլափոխում տարբերվող, քան հարթ ու հաւասար Ռուսաստանում:

Ընդհանրապէս գիւղատնտեսությունը ռուսաց Հայաստանի այս մասում կարելի է բաժանել երեք գոտիների: Մովի մակերեսային 1300 մետրից պակաս բարձրություն ունեցող տեղերում, ուր տարվայ միջին ջրմուկները 90-ին մօտ է, իսկ ամսական միջին տաքությունը հասնում է 21° աստիճանի—աւելի զարգացած է այդ և պակաս թիւնը: Ու բարձր միջին ջրակուլությունը: Այդ գոտուց աւելի բարձր, մինչև 2200 մետր, ուր տարվայ ջրմուկները 30-ի մօտ է, իսկ ամսականը 15°—գերակշռում է հացահատիկների մշակությունը: Այդ գոտուց աւելի բարձր արդէն առաջին տեղը բռնում է անասնապահությունը:

Պէտք է ասել, որ ժողովուրդը դարեւոր փորձով կարողացել է իր տնտեսությունը խելացիութեամբ յարմարել գոյություն ունեցող բարդ բնական պայմաններին և նրա թշուառությունը աւելի հասարակական բնաւորություն ունեցող պայմաններից է բխում: Այդպէս, օրինակ, այգեպահության գոտու ժողովուրդը շատ լաւ կարողացել է օգտվել հողի հրաբխային յատկություններից և բազմաթիւ և խաղողի շատ քաղցր և բազմաթիւ տեսակներ, ընտիր և համեղ պտուղներ, որոնցով Երևանի նահանգը գերազանցում է Անդրկովկասի միւս տեղերից: Այժմայից գիւղացին շատ տեխնիկական կատարելագործություններ է մտրել ինքնուրույն: Բայց, չը նայած այդ բոլորին, խաղողի մշակությունը ոչ միայն չէ ընդլայնվում, այլ և նուստում է՝ չափազանց մեծ ակցիդի պատճառով:

Բայց այն է, որ Երևանի նահանգում 1 գեոստիկ խաղողի այգին մինչև և կամուտի հասցնելը նոստում է 800—2000 բուրի: Գինին հետո արտահանելու համար պէտք է աւելի մեծ հետաքննություն պատրաստել, քան կարող է գիւղացին, այլապէս քայքայում է: Մինչև ակցիդը մեր գիւղացին մեծ օգուտ էր ստանում արաղ քաշելուց, որը աւելի գիւղին է նրա համար: Այժմ նա այդ չէ կարող անել,

ուստի խաղողի այգիները նրան օգուտ չեն տալիս: Այս փաստից երևում է թէ ինչ մեծ վնաս կարող է հասցնել ժողովրդին մի չնչին օրէնսդրական որոշում, առանց ուսումնասիրելու տեղային առանձնայատուկ պայմանները: Ինչպէս Անդրկովկասի միւս տեղերում ակցիդը առաջ մեղցրեց թթնային մշակությունը, նոյնը նա անում է այժմ և խաղողի որթերի նկատմամբ: Իսկ չորացրած պտուղները ներկայ պայմաններում փոխանակվում են միայն աւելի բարձր գոտիների ընկերների գիւղատնտեսական արդիւնների—հացահատիկների, իւղի, պանրի և այլ բերքերի հետ:

Նոյն սոցիալական անապատ պայմաններն են աչքի ընկնում և երկրորդ գործում, ուր տիրում է հացաբոյսերի մշակությունը: Հողի և օդի չորությունը համեմատ գիւղացին ընտրել է հացահատիկների այն տեսակները, որոնք դիմացկուն են այդ պայմաններում: Ուստի ցորենը երկու անգամ աւելի քանակությամբ է մշակվում, քան բոլոր միւս հացահատիկները միասին վերցրած: Եւ նշանաւորը այն է, որ ամբողջ Եւրոպայում անգամ չը կայ մի երկիր, ուր ցորենի արտադրությունը այնպիսի մեծ % կազմէր, ինչպէս Հայաստանի այդ մասում: Եւ կրողը տեղը բռնում է գարին և երրորդը՝ ձաւարը: Իսկ խոնավաւէր հաճաքը, վարսակը և ձիակորկը բացակայում են: Քիչ գործնականութիւն և աչքաբացութիւն չէ ցոյց տալիս գիւղացին և մի քանի խոտերի (հովիտ, կորնպոյ) արուեստական բուսական մէջ: Իսկ եթէ գիւղացին չէ բաժանում իր հողը հերթով մշակվող կտորների, եթէ նա չէ մտնում կահուստը չըրաքան՝ դրա պատճառը հողի սահակաւ թիւնն է, ինչպէս և զառիվայրների զանազան մասերի վերահողի տարբեր յատկութիւնները: Նոյն պայմաններում ապրող ռուս գաղթականները, ունենալով միայն անհամեմատ աւելի մեծ և աւելի հարթ հողաբաժիններ, կարող են 10—8 տարի անմշակ թողնել իրանց արտերի մի մասը, երբ տեղացիները տեղ չեն կարող մի տարուց աւելի հանգիստ տալ իրանց արտերին և պէտք է հերկեն ու ցանեն դեռ չը կազդուրված հողը: Այդ է պատճառը, որ անբերրիութեան տարիներում տեղացիներն աւելի են վնասվում, քան գաղթականները, չը նայած որ հայ գիւղացին հազարաւոր տարիների ընթացքում իր հայրենի պայմաններին աւելի է ընտելացել և հողի բնաւորութեան աւելի է ծանօթ: Այդ երևում է նրա ծանր գոլթանից, որը քաղվելու համար հարկաւոր են 8 ջուլտ կնիքներ, այլապէս թիւթ և գործիքներով նա չէր կարող այնքան խոր և լայն աղանդի փորել, որ այնքան անհրաժեշտ է խոնավութիւնը հողի մէջ պահպանելու համար: Հայ գիւղացին Արալից և հայ գաղթականներից սովորել է երկրի մշակելու մի ինքնուրույն եղանակ, որ կոչվում է «տիր» (տես երես 186): Երևանի սարահարթի ազդեցականությունը, ըստ գիւղատնտես Զաւարեանի, այդ եղանակով գտել է «ամենագոյնաւոր

գիւղատնտեսական հարցերից մէկի լուծման բանալին»:

Առհասարակ ինչ վերաբերում է հողատնտեսության, ուշադրութեան, հետաքննության և աշխատանքի մեծ, այսինքն այն յատկութիւններին, որոնք գիւղատնտեսական մէջ աւելի մեծ նշանակություն ունեն, քան մեքենաները, այդ բոլորից գուրկ չէ մանաւանդ հայ գիւղացին, միայն թէ այլ պայմաններ—հողի սակաւութիւնը, էժան վարկի բացակայությունը, սովորների փախառուական չափերը և այլն ստեղծում են տնտեսական այնպիսի դրություն, որ նա թուլանալով շատ զէպքերում դադարում է իր տնտեսության մէջ անխախտ, ինքնուրույն տեղ ինկուց: Ամեն մի անբերրիութիւնից յետոյ աղքատ գիւղացիները ստիպված են ծախել ոչ միայն տանաւմէլ իրերը, կտուրների գերանները, մանր անասունները, այլ և լծկան տաւարը, իսկ այս վերջիններից գրկվելով մնում է ձեռք վերցնել և հողից, յանձնելով նրան կապալով աւելի ունեւորներին կամ ծախել և դիմել պանդխտութեան, և այլն և այլն:

Ինքն ըստ ինքնան հասկանալի է թէ ինչ կը լինի անբերրիութեան տարիներում և երրորդը գոտու՝ անասնապահութեամբ ապրող աղքատ բնակիչները գոլթանում են: Եւ երրորդը է գոհ գնան հայի պակասութեան, իսկ անասունները կոտորվին խոտի և դարմանի թան գոլթան պատճառով: Բայց իրականութիւնը ցոյց է տալիս, որ Երևանի նահանգում, մասնաւոր Ալեքսանդրապոլի և Նոր-Բայազետի գաւառներում, ժողովուրդը կարողացել է փորձով մշակել անասնապահութեան շատ խելացի հիմունքներ: Գիւղատնտես հետազոտողը նոյն իսկ գտնում է, որ շատ տեղերում գիւղացի անասնապահների գոմերը աւելի լաւ են զբաղած, քան շատ բարձրագոյն գիւղատնտեսական ուսումնարանների այսպէս կոչված «օրինակի» փարայիները: Ժողովրդի աչքաբացութիւնը քիչ նշանակություն չունի այն իրողութեան մէջ, որ Երևանի նահանգը իր տարածութեան համեմատ պահում է անասուն ոչ միայն աւելի քան Ռուսաստանը, այլ նոյն իսկ աւելի քան Սերբիայի, Ունգարիայի և Շվեյցարիայի նման երկրները, որոնց մէջ անասնապահութիւնը գիւղատնտեսութեան շատ ուժեղ ճիւղն է ներկայացնում: Ի հարկէ, մեր երկրի չորութիւնը և քարաքարտութիւնը աւելի նպաստաւոր է մանր անասունների համար (ոչխար, այծ), քան տաւարի: Այդ է պատճառը, որ բոլոր անասունների 70% պատկանում է առաջին տեսակին:

Այժմ մնում է մեզ ծանօթացնել ընթերցողին այն միջոցների հետ, որոնք եթէ չեն էլ կարող խաղաղ վերացնել պարբերաբար կրկնվող անբերրիութիւնները, գոնէ կը թուլացնեն նրանց զարհուրելի հետեւանքները:

Լեւոն Սարգսեանց

ցանկութիւնն էր, որ իրանց որդին կրօնաւոր դառնայ, և այդ նպատակին հասնելու համար, ասում են, որ մայրը ստիպում էր որդուն տալ ինչ մի անգամ ծայրէ ի ծայր կարողալ Աստուածաշունչը: Գոյցէ հէջը սրանով պիտի բացատրվի Բօսկինի և Աստուածաշունչի ոճի տարբերակ նմանութիւնը, քոյցէ հէջը այդպիսով նրա ոճն ապագայում այնքան օրիգինալ դարձաւ, որով կարծես մարգարէ է խօսում մեծ հաւատով դէպի իր թէօրիաների ճշմարտութիւնը: Մօր տուած դաստիարակությունը այն խորը պակասութիւնն ունէր, որ նա աշխատում էր իր որդուց միանգամայն հեռացնել նիւթական որ և է հողը, կենանքի թէկուղ ամենաթիւթե գոտաւորութիւն, մինչև իսկ իր որդուն մեղի, թուլամորթ դարձնելու գնով: Եւ սակայն այս տարբերակ դաստիարակությունը այն անձնական առաւելություն ունեցաւ, որ երեխայի էսթետիք ճաշակը նոյն իսկ հիւանդոտ զարգացման հասաւ, նրբացաւ էքստազի հասնելու չափ: Գոյցէ և Բօսկինի մօր այդ սխալ հասկացողութիւնը դաստիարակություն մասին մէկն է այն ձախորդ պայմաններից, որոնցով լիքն են մեծ մարդկանց կենանքերը և որոնք սակայն իրանց արտաքին ձախորդութեան տակ յաճախակի ծածկում են մեծ մարդկանց ապագայ աղողութիւնների, ապագայ յաղթանակի խորհրդաւոր համարձեցներ: Մտորները հետ կատարած յաճախակի ճանապարհորդութիւնները հարուստ նիւթ էին մասնակցութեամբ նրա վառ երեւակայութեանը, ֆանտաստիք մտազատկաններին համար: Հինգ տարեկան հասակում նա արդէն չափիլի էր էլիսալ լինելը, վեց տարեկան նրան Ֆրանսիա

տարան, ուր նա տեսաւ Կարլոս X-ի թագադրութեան չքեղ հանդէսները իրանց բոլոր արքայական ճոխութեամբ: Նա առիթ ունեցաւ նաեւ այցելել Վաթիկան, ուր բնութիւնն աւանդելով աւելի անարգված էր մարգարային յորդարելով: Մնացած վերադառնալով նա այցելեց Շէքսպիրի գերեզմանը, Բիթլինիումի գործարանները, ամեն տեղից տանելով իր հետ յուշատետրի նկարներ, հանքերի, քարերի, բոյսերի ժողովածուներ և արձանագրելով տեսանքները: Այսպէս իր ծնողների հետ յաճախակի կատարած ճանապարհորդութիւնները Անգլիայում, Շվեյցարիայում, Իտալիայում և Ֆրանսիայում զարգացրին նրա մէջ բնածին ճաշակը դէպի բնութիւնն ու գեղարուեստը: Դեռ 14 տարեկան հասակում, 1833 թիւն, լինելով Շալուզում (Շվեյցարիա) նա, կրք առաջին անգամ տեսաւ Արլեան գեղանկար չլիթան—ձիւնապատ կատարները, հսկայ լեռները լուռ խորհրդաւորութիւնը նրա վրա այնպիսի խորը ազդեցություն գործեցին, որ նա մի անգամ ընդ միշտ յաղիշտակված մնաց դէպի բնութեան այդ հսկանքը և սերը դէպի Արլեանը նրա համար ամենաբուռն զգացմունք մնաց իր ամբողջ կենանքում: Վերաների դռները բաց են անում ինձ համար մի այլ կենանք, որ դադար կանգնի միայն այն լեռների դռների մօտ, որտեղից մարդիկ էլ չեն վերադառնում», գրում էր նա: Օքսֆորդի համալսարանում նա հին և նոր կլասիցիզմներն ուսումնասիրեց և 1839 թիւն առաջին մրցանակը ստացաւ բանաստեղծական մի երկի համար, իսկ 1842 թիւն նա արդէն «գեղարուեստի ուսուցիչ» տիտղոս ունէր: Հասարակական գործունէութիւնը, նա սկսեց վերստին

ճանապարհորդել և նկարել դայտեր, լեռներ, ձորեր, անտառներ, մեծ, ազատ բնութիւն, որի հետ նա կարծես ձուլվեց, կորաւ նրա լայն ծոցում:

Իր առաջին գրական փորձերը—Բնութիւն և Մօրբանի մասին—նա գրել է իր 15—20 տարեկան հասակում, որոնք և հրատարակվել են «Magazine of naturel History» գիտական ամսագրի մէջ: Այնուհետեւ նրա ամբողջ կենանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ անվերջ այցելութիւններ մայր բնութեանը: Եւ որ պիտաւոր է, երբ նա այցելում է մի լեռ, մի ձոր, մի հովիտ կամ լիճ, իր պարապ ժամերի հանգստեան համար չէ անում այդ, այլ նա գնում է կարծես իր Աստուծու մօտ, որ թարմացնէ իր կենանքը, ստանայ նոր, վսեմ ներշնչումներ, աստուածային անապատ աղբիւրից քաղէ բարձր ճշմարտութիւններ՝ մարգարէին յատուկ կրակով և հաւատով աշխարհին հաղորդելու համար: Այն էսթետիկական հանգիքը, որ նա ստանում էր այն անգամ բնութեան ծոցում, նա գտնում էր «աւելի մեծ, քան... այն, որ մի սերահար կարող է զգալ իր չքնաղ սիրուհու մօտ»: Վերադառնալով որ և է սերած վայր, եթէ նա գտնում էր բնութիւնն աւելի բարձր մարդկանց ձեռքով, տակն ու վրա եղած, այլանշանակ մարդկանց համար, կամ մի կարծիքով, կամ մի տեսնում էր մի սիրուն ծովափ նաւահանգստի վերածված, կամ մի գեղանիստ ու նկարչական լեռան կրճէն հիւրանոց հաստատված, նա վերաւորվում էր, ինչպէս կը վերաւորվի մի մարդ իր սիրուհուն հասած անարգանքը տեսնելով: Այն, դուք անարգել էք բնութիւնը, բացականչում էր նա դիմելով իր ժամանակակիցներին, դուք ա-

նարգել էք ամեն մի սուրբ և խորը զգացմունք... Դուք երկաթուղու համար կամուրջ էք ձգել Շալուզի ջրվեժի վրա, դուք տունէք էք շինել Լիւցերնի ժայռերի մէջ... չը կը Անգլիայում մի խաղաղ ձորակ, որ դուք լցրաւ չը ինչեք ոռոգող կրակով»:

Ընթերցողը զարմացած կը հարցնի երեկ թէ էլ ինչուին է Բօսկինի մեծութիւնը, երբ նա հակառակ է քաղաքակրթութեան, հակառակ է պրօգրեսի: Բօսկինը այն պարագօքալ խելքերից մէկն է, որոնք նկատելով ժամանակակից քաղաքակրթութեան անգործութիւնը լուծելու բազմաթիւ հասարակական և փիլիսոփայական բարդ պրօբլեմներ, նկատելով որ արցիական մարմին խոչոր, դարաւոր վէրքերը շարունակում են անբուժելի մնալ անգրագիտութեամբ կերպարանքներ ստանալով, խորթ գիւղութեամբ լցված դէպի տանջվող մարդկությունը, ելք է փնտրում մեղմելու նրա ցաւերը, կարծես զլտացած երեւր դարձնում է իր կարծիքով մանկացած գիտութիւնից, կրթութեան առաջ բացականչելով՝ «կայ, ընտրած ճանապարհը կորոտարեւ է քեզ համար: Եթէ իւրաքանչիւր անհատական գործողութեան բաւարարում արժէքը նրան ներշնչող մօտիվները մէջ պիտի փնտռել, ապա Բօսկինը ժամանակակից քաղաքակրթութեանը հակառակ լինելով հանդերձ, ոչինչ չէ կորցնում իր մեծութիւնից, փոյթ չէ նոյն իսկ եթէ նա ծայրահեղութիւնների, պարագօքների մէջ է ընկնում:

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Т.—ва, Большая-Ванская ул., № 27.